Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2011 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2011 թվականին քաղաքացիներից ստացվել է 1696 նամակ, որից 1665-ը՝ աջակցության խնդրանքով, 19-ը՝ բողոք, 7-ը՝ առաջարկություն, 5-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 74 դիմումներից 68-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 12 դիմումներից 8-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 68 դիմումներից դրական լուծում է ստացել 17-ը, 32 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու խնդրանքով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 78 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 961 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 826 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 211 քաղաքացիներից բավարարվել է 205-ի խնդրանքը, 70 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 58 հոգու տրվել է առողջարանային բուժման ուղեգիր:

Մարզպետի մոտ կատարվել է 513 քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ /2011թ./

1. Ստացվել են նամակներ ընդամենը - 1696

որից՝	
աջակցություն	1665
առաջարկություն	7
հարցում	5
բողոք	19
այդ թվում՝	
կրկնակի	6
կոլեկտիվ	5
2. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	22
կոմունալ-կենցաղային	22
շինարարական	3
արդձեռն/տրանսկապ/	3
գյուղատնտեսական	10
բնութ. պահպանութ.	3
առևտրի	3
կենսաթոշակի և նպաստի	20
առողջապահության	343
կրթական և մանկ.հիմն	128
գիտութ.կուլտուրա	7
ֆինանսական	961
օրենսդրական	5
քաղ. և որդեգրման	13
աշխ.տեղ և հաշվառման	68
հողհատկացում և հողօգտ.	12
ապարատային	33
այլ հարցեր	40